ՀՏԴ 941(479.243) Հայոց պատմություն

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920թթ.)

Արմինե ԱՌՍՏԱՆՅԱՆ

Բանալի բառեր. *Լեռնային Ղարաբաղ, պատմագիտություն, կեղծարանում, փաստեր, խեղաթյուրում, նվաճողական, քաղաքականություն, արցախահայություն, վիճելի տարածք, աշխատություն*

Ключевые слова: *Нагорный Карабах, история, факты, спорный, искажения, экспансионистская политика, карабахские армяне, пропаганда, регион, работа, историк.*

Key words: *Nagorno-Karabakh, history, facts, contentious, distortion, expansionist politics, people of Artsakh, agitation, region, work, historian.*

А. Арустамян

Антиармянская пропаганда Азербайджана (1918-1920гг.)

В данной статье представлена действительность, сложившаяся вокруг карабахской проблемы 1918-1920гг. и фальсификации, выдвинутые азербайджанской историографией. В статье представлены взгляды, изложенные в трудах азербайджанских историков И. Нифталиева, Балаева, где искажены реальные исторические факты. Автор представил тенденции захватнической политики Азербайджана и претензии к Нагорному Карабаху. Основываясь на исторической действительности, автор попытался оппонировать азербайджанской трактовке событий и выявить фальсификации азербайджанской историографии.

A.Arstamyan

Azerbaijan's Anti-Armenian Propaganda (1918-1920s)

The article presents the reality of the Karabakh conflict in the period from 1918 to 1920 and the falsifications of Azeri historians related to the subject. The article presents the approaches of Azeri historians I. Niftaliev, A. Balaev who distort key historic facts. The authors presented the tendencies of aggressive policy of Azerbaijan and claims to Nagorno-Karabakh. The author of the article makes an attempt to oppose the Azeri viewpoint and, basing on the historic reality, to reveal the falsifications of Azeri historians.

Ներկա հոդվածում ներկայացված է 1918-1920թթ. Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ ստեղծված իրականությունը և ադրբեջանական պատմագիտության առաջ քաշած խեղաթյուրումները: Հոդվածում ներկայացված է ադրբեջանական պատմաբան Ի. Նիֆտալիևի աշխատության մեջ առաջ քաշած տեսակետները, որով նա կեղծարանում է պատմական իրական փաստերը: Հեղինակը ներկայացնում է Ադրբեջանի զավթողական քաղաքականության դսևորումները և հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Հեղինակի կողմից փորձ է կատարվել, հիմնվելով պատմական իրականության վրա, հակադրվել և վեր հանել ադրբեջանական պատմագիտության կեղծարանումները:

1918-1920 թթ. հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները կողմերի միջև եղած սահմանային խնդիրների հետևանք էին: Հայաստանի Հանրապետությունը մտադիր չէր հրաժարվել Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի և հայկական մյուս տարածքների նկատմամբ ունեցած իր իրավունքներից: Իսկ Ադրբեջանը հայկական տարածքները բռնակցելու ճանապարհին դիմում էր ցանկացած քայլի: Ադրբեջանի հակահայ քարոզչական մեքենան ջանքեր չի խնայում կեղծարանելու պատմական փաստերն ու իրողությունները, ծուռ հայելու մեջ ներկայացնելու հայտնի դեպքերն ու շարադրել դրանք սեփական հորինված սցենարով: Պատմական փաստերի կեղծարանման, բացահայտ թշնամանքի և ատելության ոգով է շարադրված Այդըն Բալաևի <<Ադրբեջանական ազգային շարժումը 1917-1918թթ.[1]>>, <<Մարտյան իրադարձությունները Ադրբեջանում 1918թ.>>[2], Իլդար Նիֆտալիևի << Ադրբեջանական ԽՍՀ-ն հայերի զավթողական պլաններում (20-րդ դարի 20-ական թթ.)>>աշխատությունները[3]: Բալաևի աշխատությունները աչքի են ընկնում փաստերի բացահայտ խեղաթյուրմամբ: Սխալված չէինք լինի, եթե ասենք, որ այդ միտումը ադրբեջանցի պատմաբանի մոտ հասնում է զավեշտական մակարդակի: Բալաևը իր աշխատության մեջ

[1]Балаев А., Азербайджанское национальное движение 1917-1918гг., Баку 1998.
[2]Балаев А. , Мартовские события 1918 года в Азербайджане, Баку 2009.
[3]Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы 20-ого века),Баку, 2010.

նշում է, թե 1918թ. Ադրբեջանի մուսավաթական հանրապետության հռչակումից հետո ամենաբարդը Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններն էին: Քողարկելով Ադրբեջանի նվաճողական հավակնությունները, բացահայտ ագրեսիան Հայաստանի հանրապետության նկատմամբ վերոհիշյալ հեղինակը անհիմն մեղադրանքներ է ներկայացնում հայկական կողմին՝ կեղծելով իրականությունը ստերի անվերջ շարանի ներքո: Ամենազավեշտալին էլ այն է, որ հեղինակը դեպքերը ներկայացնում է այնպես, որից միամիտ ընթերցողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե հայերն անշնորհակալ գտնվեցին ադրբեջանցիների կատարած <<բարեգործությունների հանդեպ>>: Այսպես, Բալաևը գրում է, որ 1918թ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման պահին հայ ժողովուրդը մայրաքաղաք չուներ: Ադրբեջանական կողմը ցանկանալով օգնել հարևան ժողովրդին, Երևանը ադրբեջանական ազգային խորհրդի 1918թ. մայիսի 28-ի որոշմամբ զիջում է հայերին: Սակայն <<անշնորհակալ հայերը>> չբավարարվելով դրանով՝ ներկայացնում են տարածքային նոր պահանջներ Ադրբեջանին[1]: Հայաստանի առաջին հանրապետությունն հռչակվեց քաղաքական ծանր պայմաններում, երբ հայ ժողովուրդը կենաց ու մահու պայքար էր մղում թուրքական նվաճողների դեմ, երբ Սարդարապատում վճռվում էր հայ ժողովրդի լինելիության խնդիրը, երբ վտանգն անմիջականորեն սպառնում էր Հայաստանի սրտին՝ Այրարատյան նահանգին ու նրա կենտրոն հայոց հինավուրց Էրեբունի-Երևանին: Այդ ինչպես են ադրբեջանցիները հայերին կառավարական որոշմամբ նվիրել Երևանը, երբ իրենք դեռ պետություն չէին ստեղծել, երբ անմիջականորեն այդ Երևանը գրավելու համար մուսավաթականներին դաշնակից թուրքերը սպառնում էին գրավել այն, ու միայն մայիսյան հերոսամարտերում հայ ժողովրդի ցուցաբերած աննկուն կամքն ու հերոսական պայքարը փրկեց հայությանը և վերականգնեց հայոց պետականությունն ու ծնունդ տվեց Հայաստանի առաջին հանրապետությանը: Բալաևը գրում է, որ հանրապետության հռչակման առաջին իսկ օրերից հայկական կողմը բացահայտ թշնամական կեցվածք է ընդունում Ադրբեջանի նկատմամբ՝ տարածքային հավակնություններ ցուցաբերելով զուտ ադրբեջանական հողերի՝ Նախիջևանի, Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Անհիմն կերպով առանց որևէ ապացույց մեջբերելով ադրբեջանցի հեղինակը հայկական բուն պատմական հողերը հռչակում է ադրբեջանական: Անհասկանալի է նաև Բալաևի կողմից այն պնդումը, թե Հայաստանի առաջին հանրապետությունն հռչակվեց ադրբեջանական հողերի վրա: Միտումը պարզ է՝ ադրբեջանական հայտարարել տարածաշրջանը մուսավաթական նվաճողական նկատառումներից ելնելով ու սնվելով պանթուրքիզմի հետադիմական ու ոճրագործ գաղափարախոսությունից, սակայն անհասկանալի է պատմաբանի կեցվածքն այն տեսակետից, որ իր կողմից առաջ քաշված դրույթներն ներկայացված են առանց որևէ հիմնավորման: Քանզի, եթե նույնիսկ որոշ ադրբեջանցի կեղծարարներ ամեն ինչ ադրբեջանական հայտարարելով, այսպես ասած փորձում են դա <<հիմնավորել>> իրենց վերագրած ալբանական արմատներով, ապա Բալաևը իր ազգի ներկայացուցիչների համար չի փնտրում ալբանական արմատներ, դեռ ավելին նույնիսկ դեմ է <<ադրբեջանցիներ>> անվանը, համարելով, որ ճիշտը <<ադրբեջանական թուրքեր>> արտահայտությունն է: Մի էթնիկական հանրության պատմագիտության ներկայացուցիչներ, որոնք դեռ չեն կարողանում կողմնորոշվել, թե ովքեր և ինչ արմատներ ունեն իրենք, որդեգրել են հանցավոր մի միտում ոչ միայն քաղաքականության մեջ, այլև պատմագիտության ոլորտում՝ <<սեփականաշնորհել>>հայ ազգի պատմությունը, նրա ազգային տարածքը, ձեռք մեկնել և խեղաթյուրել այդ ազգի պատմությունն, որը հիրավի համաշխարհային պատմության մեջ ունի իր կայուն տեղը հինավուրց արմատներով ու մշակութային ժառանգությամբ: Վերջինիս մոտ փաստերի խեղաթյուրումն հասնում է այն աստիճանի, որ գրում է, թե բուն Հայաստանի Հանրապետությունում էլ ադրբեջանական բնակչությունը մեծամասնություն է կազմել պարզապես հայկական կողմի որդեգրած

[1]Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998,стр. 106.

տակտիկան կայանում էր նրանում, որ հալածանքների, սպառնալիքների, ճնշումների ներքո ստիպեն ադրբեջանցիներին դուրս գալ իրենց հողերից: Ադրբեջանի խորհրդայնացման վերաբերյալ Բալաեվը գրում է, թե իբր խորհրդային կարմիր բանակը գործում էր դաշնակցականների կառավարության հետ միասին: Բալաևը իր մեկ այլ գրքում<<Մարտյան իրադարձությունները 1918թ.>> գրում է, թե հայ և ադրբեջանական ազգային շարժումների միջև էական տարբերություններ կային: Ադրբեջանցի պատմաբանը, որը ամենավերջին ձևերով կեղծաբանում է փաստերը, գրում է, դաշնակցությունը, որը փաստացի այդ ժամանակ ղեկավարում էր ազգային գաղափարախոսությունը, պահանջներ ուներ միանգամայն պատմականորեն ադրբեջանական հողերի՝ նկատմամբ: <<Դաշնակցությունը միայն մի երազանք ուներ վերականգնել մեծ Հայքը ծովից ծով սահմաններում>>, թե <<հայկական կողմը մեծ սպասումներ ուներ առաջին աշխարհամարտում ռուսական կողմի հաղթանակի հետ, քանի որ միայն այդ ճանապարհով կարող էին իրականանալ հայերի տարածքային պահանջները>>, իսկ ադրբեջանական ազգային շարժումը ըստ ադրբեջանցի հեղինակի պայքարում էր Ադրբեջանի ազգային անկախության համար: Պարզ է այն, որ ադրբեջանցի այս հեղինակը ոչ միայն խեղաթյուրում է փաստերը, այլև զբաղվում է պատմաշինարարությամբ, հորինում կեղծ պատմություն: Նախ ադրբեջանական ազգային շարժում գոյություն չուներ, քանի որ նախքան նման շարժում ծագելը պետք է լիներ ազգ իր պատմությամբ և կենսական տարածքով ու հասունացած ազգային ինքնագիտակցությամբ, անհասկանալի է նաև թե ում դեմ էր ուղղված այդ ազգային շարժումը, ովքեր էին սպառնում վերջիններիս ինքնորոշմանը,եթե նույնիսկ կար այդպիսին, ինչ պահանջներ ունեին իրենք, երբ ընդամենը մուսավաթական կուսակցությունը, համաթուրանական գաղափարախոսության զավթողական նկատառումներից ելնելով, ծնունդ տվեց Ադրբեջանական մուսավաթական հանրապետությանը՝ նպատակ ունենալով թուրք-ադրբեջանական կամուրջ ստեղծել այդ ճանապարհին հայտնված հայ ժողովրդի և նրա կենսական տարածքների գրավմամբ: Ընդհանրապես ադրբեջանական պատմագիտությանը հատուկ է իրադարձությունները ներկայացնել այնպես, որ ընթերցողին անմիջապես թվում է թե իրենք զոհ են, իսկ հայերն ջարդարարներ, որոնց նպատակն էր բնաջնջել իրենց: Վերջինս նշում է, թե դաշնակցության և մուսավաթի միջև տարբերությունները կայանում էին նրանում, որ դաշնակցությունը կողմ էր պատերազմը շարունակելուն ռուսների կողմից, հույս ունենալով, թե այդ պատերազմում Թուրքիան պարտություն կկրեր և հայերին կհաջողվեր իրականություն դարձնել «այսպես կոչված Մեծ Հայքի» ստեղծման գաղափարը ու նաև ցինիկաբար հայտարարում, թե բոլշևիկների իշխանության գալով Մեծ Հայքի ստեղծման գաղափարը ի չիք դարձավ, քանի որ վերջիններս դեմ էին պատերազմին, ու քանի որ հայերի ձգտումները արևմուտքում կապված Թուրքիայի հետ իրականություն չդարձան, ուստի վերջիններս իրենց հայացքն հառեցին Անդրկովկասի վրա: Պատմաբանն այդ մոռանում է, որ արդեն 1917թ. Ղարաբաղում ստեղծվել էր ժամանակավոր կառավարման համակարգ և Ղարաբաղի հայության հրավիրած համագումարների նպատակն էր ընդդիմանալ մուսավաթական նվաճողական քաղաքականության և ոչնչացման ծրագրերի դեմ էին ու միանալ մայր Հայաստանին: Բալաևը կեղծելով պատմական փաստերը միաժամանակ ինքն իրեն հակասում է գրելով, թե դաշնակցություն կուսակցության և բոլշևիկների ցանկություններն համընկնում էին և այդ ցանկությունը կայանում էր նրանում, որ երկուստեք դեմ էին այսպես կոչված ադրբեջանական ազգային շարժմանը և հայերը նախորոք զինվել էին ու կազմել ադրբեջանական գյուղերի անունների ցուցակները, որոնք պետք է ոչնչացնեին: Ինչքան էլ Բալաևը իր աշխատությունում փորձում է Ադրբեջանը ներկայացնել որպես զոհ պետություն, և իրավիճակը ներկայացնել այնպես, թե հայերի միակ նպատակն է եղել բնաջնջել ադրբեջանցիներին, այդուհանդերձ իր աշխատության էջերում Բալաևը կատարում է եղրահանգումներ, որոնք անկախ իրենից բացահայտում են քողարկված ճշմարտությունը: Այսպես ադրբեջանցի պատմաբանը գովերգելով մուսավաթական կուսակցության դերը Ադրբեջան պետության ստեղծման գործում, գրում է, թե մուսավաթական կուսակցության և երիտթուրքերի իթթիհատ կուսակցության միջև կային բազմաթիվ նմանություններ, դեռ ավելին իթթիհատը որդեգրել է մուսավաթի մի շարք

դրույթներ: Նշելով մուսավաթի ծրագրային հիմունքները, հեղինակը գրում է, որ թե մուսավաթի և թե իթթիհատի գլխավոր նպատակը մուսուլմանական աշխարհի միավորումն էր և այդ ճանապարհին <<խոչընդոտող>> արգելքների վերացումը[1]: Ասվածից միանգամայն պարզ է, հեղինակը նույնիսկ չի սքողում կուսակցության որդեգրած ագրեսիվ, ծավալապաշտական էությունն և նույնիսկ նշում է, որ թուրքիզմը կուսակցության գլխավոր առանցքային հիմնադրույթն էր: Պանթուրքիզմի հետադիմական և արյունռուշտ գաղափարախոսությունը որդեգրած մուսավաթի նպատակը վերջին հաշվով հայ տարրի բնաջնջումն էր: Ադրբեջանում 1918թ. հայասպանության քաղաքականությունը դարձավ նպատակային պետական ծրագիր, որն իրականացվում էր թուրք- թաթարական միավորված ուժերով: 1918թ. սեպտեմբերին թուրքական ոճրագործների կողմից 3 օր շարունակ Բաքվում հայերի սպանդ է իրականացվել, որի ընթացքում դաժանաբար սպանվել են հարյուրավոր հայեր: Իրենք թուրքերը իրականացնելով նման ջարդեր հայտնել են, թե իբր դրանով լուծում են նույն թվականի մարտին Բաքվում իբր հայերի ձեռքով իրականացված ադրբեջանցիների կոտորածը: Ինքը Բալաևը դա ներկայացնում է որպես հայերի կողմից կատարված ջարդ: Մինչդեռ իրականությունն այն է, որ մարտյան այդ դեպքերը տեղի են ունեցել Բաքվի կոմունայի և մուսավաթական զինված ջոկատների միջև և երկուստեք եղել են զոհեր: Հատկանշական է այն, որ ամեն անգամ թուրք- թաթարական զինված խմբավորումները հայերի նկատմամբ իրենց ոճրագործությունները <<արդարացնում էին>> իբր որպես վրեժխնդրության լուծում հայերից ի պատասխան նույն թվականի մարտին ադրբեջանցիների հանդեպ իրականացրած ջարդերի: Մի խոսքով 1918թ. ուրվագծված, արհեստածին Ադրբեջանի հանրապետությունը, պետական քաղաքականություն դարձրեց հայոց պատմական հողերի գրավումը, այդ հողերի լիիրավ սեփականատերերի ոչնչացումը: Պանթուրքիզմը հայոց հայրենիքի երկու հատվածներում էլ սպառնում էր ոչնչացնել հայոց տարրը: Ադրբեջանական պատմագիրը խեղաթյուրելով պատմությունը, Ադրբեջանի հանրապետության ստեղծումը ներկայացնում է, որպես ադրբեջանական ազգային- ազատագրական շարժման արդյունք, որպես ադբեջանցիների ազգային ինքնագիտակցության արթնացում[2], որը ինքնին հակագիտական որակավորում է: Այդ կապակցությամբ նույնիսկհեղինակի մեջբերումները հակասում են ինքն իրեն: Բալաևը նշում է, թե միանգամայն իրավացի է Ռասուլզադեն(վերջինս 1918թ. ադրբեջանական ազգային խորհրդի նախագահն էր), որն իր հոդվածներից մեկում նշում է թե եթե որևէ ադրբեջանցու հարցնես, ինչ ազգի ես պատկանում, կպատասխանի մուսուլմանական, ինչ լեզվով ես խոսում, դարձյալ կպատասխանի մուսուլմանական և այդպես շարունակ, ու ավելացնում, որ փաստորեն ինքը ադրբեջանցին զուրկ է ազգային գիտակցությունից ու արմատներից և հետևաբար պետականության արմատներից[3]: Այդուհանդերձ պատմականորեն անարմատ այդ հավաքականության պատմաբան ներկայացուցիչները իրենց աշխատություններում փորձում են սեփականացնել հայոց հնամենի պատմությունը, հայերին համարել <<եկվոր, նվաճող>>, հավակնում հայոց պատմական հողերին ոչ միայն վիճելի հայտարարված, այլ ընդհանրապես ողջ Արևելյան Հայաստանի նկատմաբ: Արհեստածին և անարմատ ադրբեջանական պետության ստեղծման մասին է վկայում Բալաևը մեջ բերելով նույն Ռասուլզադեի մեկ այլ ելույթ արված ադրբեջանական պառլամենտի նիստում, որտեղ վերջինս նշել է թե <<ադրբեջանական իդեալը, որ ծնվել է առաջին աշխարհամարտում (սա այն նույն իդեալն է, որով Թուրքիան մտավ առաջին աշխարհամարտ՝ այսինքն պանթուրքիզմը- մեջբերումը մերն է՝ Ա. Առստամյան), և որը առաջին քայլն է կատարում քաղաքական կյանքում: Այդ նորածին թուրքական քաղաքական մանուկը կդառնա չափահաս, թե կմահանա ինչպես վտիտ մի մանուկ, ահա ամենադժվար, բայց չափազանց կարևոր պատասխանատվությունը, թույլ չտալ, որ մահանա նորածին

[1] Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998,стр. 31.
[2] Балаев А. Азербайджанское …, стр.5.
[3] Նույնը, էջ 17.

Ադրբեջանը[1]>>: Ադրբեջանական պետության ստեղծման մասին անուղղակի, սակայն դիպուկ մի մեջբերում է կատարում Բալաևը, նշելով թե գեներալ Թոմսոնը, որը սկզբնական շրջանում չէր ճանաչում Ադրբեջանի անկախությունը, ասելով թե << հանրապետություն, որը ծնվել է ադրբեջանական ժողովրդի ընդհանուր կամքի համաձայն գոյություն չունի, այլ կա ընդամենը թուրքական ինտրիգների արդյունքում ծնված կառավարություն>>:[2]Ցավոք այս ճշմարտացի գնահատականից հետագայում անգլիական կառավարությունը հրաժարվեց հովանավոր կանգնելով Ադրբեջանին ընդդեմ հայության արդարացի պահանջների: Ինքը Բալաևը ևս հասկանում ու նշում էր, որ անգլիական դիվանագիտության փոփոխությունը Ադրբեջանի նկատմամբ, կապված էր վերջինիս հետ ընդդեմ Ռուսաստանի ունեցած շահերով: Նույնիսկ այսպիսի արտահայտություն է անում, թե անգլիացիների վերաբերմունքի այդ փոփոխությունը կապված չէր նրա՝<< ադրբեջանցիների սև աչքերին սիրահարվելու հետ>>, այլ տնտեսական և քաղաքական շահերն էին պատճառը փոփոխության: Ադրբեջանցի հեղինակը նշում է այստեղ Անգլիայի հակառուսական կեցվածքը և նավթի գործոնի դերը,որը հիմք հանդիսացավ ադրբեջանա-անգլիական մերձեցման համար: Վերջինս նշում է, թե Թոմսոնը հայտարարել է 1918թ. դեկտեմբերի 28-ին, որ որ ինքը ճանաչում է Ադրբեջանի իշխանությունը և ամեն կերպ օգնելու է նրան: Բաքվի սեպտեմբերյան ջարդերի մասին, որին զոհ գնացին շուրջ 30000 հայեր, Բալաեվը ոչինչ չի նշում, մինչդեռ այդ մասին ոչ միայն հայկական և օտար աղբյուրներն են վկայում, հենց ադրբեջանական արխիվները:[3]1918թ. չնայած Թուրքիայի պարտությանը 1-ին աշխարհամարտում թուրքերը շարունակեցին իրենց առաջխաղացումը ձգտելով հասնել պանթուրանիզմի իրականացմանը: Նրանք 1918թ. սեպտեմբերի 15-ին գրավեցին Բաքուն ոչնչացնելով շուրջ 30000 հայեր: Պատմությունը Բալաևի մոտ անհիմն և հակասական է ներկայացված:Վերջինս փաստորեն փորձելով ադրբեջանական պետության ստեղծումը ներկայացնել որպես ադրբեջանական ազգային ինքնագիտակցության արթնացման արդյունք, ամեն կերպ փորձում է զարգացնել այդ հայեցակարգը, բայց քանի որ դա անհիմն է, ապա իսկույն երևան է գալիս հեղինակի գիտական անկարողությունը այդ հարցում:Նա նշում է, թուրքական կառավարության ջանքերի մասին ուղղված Ադրբեջանի խորհրդայնացմանը, և իրավացիորեն բացատրում դա հետևյալ կերպ, թե որպես առաջին աշխարհամարտում մահվան դատավճռի առաջ կանգնած պետություն՝ Թուրքիան, իր հայացքն ուղղեց դեպի Խորհրդային Ռուսաստան, որն ակնկալում էր Թուրքիայի օգնությունը տարածաշրջանի խորհրդայնացման հարցում և նշում է, որ հովանավորվելով Թուրքիայի կողմից Ռուսաստանը գործողությունների ազատություն ստացավ Ադրբեջանի դեմ: Սակայն Ադրբեջանը ըստ հեղինակի չէր ուզում խորհրդայնանալ և պայքար էր մղում ընդդեմ կարմիր բանակի: Մինչդեռ իրականությունն այն է, որ ի տարբերություն Հայաստանի հանրապետության, որն իսկապես ստեղծված էր ազգային պետականության հիմքերի վրա և որի անկումն իսկապես արդյունք էր քեմալա-խորհրդային մերձեցման և թուրքական հարձակման, Ադրբեջանում խորհրդային իշխանությունը հաստատվեց առանց ներքին դիմադրական պայքարի:Պանթուրանիզմը միավորել էր Ադրբեջանին ու Թուրքիային ու ներքին անհամաձայնություն այստեղ լինել չէր կարող: Ադրբեջանական արխիվում պահպանված ու հրապարակված նյութերից պարզ է դառնում, որ ադրբեջանական գործիչները, պահը ճիշտ ընկալելով, ընդունել են խորհրդային իշխանությունը նույն նվաճողական պահանջներով: Ն. Նարիմանովը իր ելույթում կոչ էր անում ընդունել խորհրդային իշխանությունը, քանի որ դա կստեղծի մի այնպիսի իրավիճակ, որով իրենք կհայտնվեն ավելի շահեկան վիճակում: Շահեկան վիճակ ասելով Նարիմանովը նկատի ուներ, որ քեմալա-ադրբեջանական կապը կամրապնդվեր խորհրդաքեմալական կապով:

Բացահայտ խեղաթյուրումներով առլեցուն է Նիֆտալիևի աշխատությունը: Վերջինս ներածության մեջ նշում է իր ուսումնասիրած թեմայի հրատապությունը՝ այն կապելով 1988թ.

[1]Նույնը, էջ 28
[2]Նույնըէջ 31
[3]Борьба за победу Советской власти в Азербайджане (1918-1920гг.) документы и материалы, Баку. 1967.

Արցախյան շարժման հետ: Հեղինակը իրավացիորեն արցախյան հիմնահարցի ակունքները տեսնում է ավելի վաղ, սակայն գռեհիկորեն հայտարարում, որ ժամանակին պատմության դասերը հաշվի չեն առել, այդ պատճառով էլ 80-ական թթ. բախվել են արցախահայերի “ագրեսիային” և անջատողական շարժմանը: Հեղինակը պատմական փաստերը շրջանցելով և ավագ եղբոր՝Թուրքիայի քաղաքական դիրքորոշումը պաշտպանելով՝ գրում է, թե հայ պատմագիտական միտքը որդեգրել է ստահոդ <<ցեղասպանվածի բարդույթը>> դրանով իսկ նվաճողական նկրտումներ հանդես բերելով այսպես կոչված Թուրքիայի յոթ վիլայեթների նկատմամբ, այնպես էլ այդ նկրտումները տարածվում են <<ադրբեջանական>> այնպիսի տարածքների վրա, ինչպիսիք են Ղարաբաղն ու Զանգեզուրը: Հարկ է նշել մի կարևոր իրողություն. Անկախ թշնամու կեցվածքից, անկախ ազգային պատկանելությունից, պատմագիտությունը կոչված չէ ծառայելու կամ հարմարեցվելու տվյալ ազգի, կամ ազգային իշխանությունների հավակնություններին, կամ ստեղծած գաղափարախոսությանը: Պատմական փաստերը խեղաթյուրել և հորինել կեղծաբանություն՝ ազգային ագրեսիան քողարկելու, կամ զավթողական հավակնությունները հիմնավորելու, պատմության չեղած էջերը լրացնելու նպատակով՝ ոչ միայն հակագիտություն է, այլ նաև համամարդկային արժեքների դեմ ոտնձգություն, հանցագործություն: Այլ բնորոշում ադրբեջանական պատմագիտությանը չի կարելի տալ, քանզի միայն մարդկային արժեքների դեմ մեղանչող մեկը կարող է հայտարարել, թե հայոց պատմագիտական միտքը որդեգրել է՝ իր ժողովրդին հին քրիստոնեական ազգ ներկայացնելու տենդենցը, մի փաստարկ, որն ընդունում է համաշխարհային պատմությունը, որն այնքան ակներև է, որ նույնիսկ պատմականորեն ապացուցման կարիք երբևէ չի ունեցել: Հեղինակի կողմնակալ, պատմական ճշմարտության խեղաթյուրման դիրքերից գրված աշխատության մեջ փորձ է կատարվում ադրբեջանական քաղաքական քարոզչամեքենային ձեռնտու տեսանկյունից ներկայացնել 1919թ. հունվարի 15-ին ադրբեջանական կառավարության որոշմամբ Խոսրով բեկ Սուլթանովը նշանակվեց Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ և օգտվում էր անգլիական հրամանատարության աջակցությունից[1]: Նիֆտալիևը իր աշխատության մեջ ճկուն կերպով քողարկում է Սուլթանովի կատարած ոճրագործությունները և արցախցիների բարձրացրած ապստամբությունը համարում ներմուծված և հրահրված դաշնակցության կողմից: Մինչդեռ պատմական ճշմարտությունը հետևյալն է. Արցախահայությունը երբեք չի ընդունել ադրբեջանական իշխանությունը, ոչ մի արցախցի անկախ զբաղեցրած դիրքից, կուսակցական պատկանելիությունից, կամ պաշտոնից ընդունելի չի համարել ադրբեջանական իշխանությունը: Դրա վառ ապացույցն է արցախահայության հրավիրած համագումարները, որտեղ մշտապես դրսևորվել է նրանց անհողդողդ կամքը՝ մերժել Ադրբեջանի իշխանությունը: Իրականությունն այն է, որ Սուլթանովը ձգտում էր արյան գնով Ղարաբաղը միացնել Ադրբեջանին: 1919թ. ամռանը ծանր ժամանակաշրջան էր հայության համար: Սուլթանովի հրոսակները սարսափելի սպանդ կազմակերպեցին Ղայբալիշեն, Կրկժան, Խնածախ, Դաշուշեն և այլ գյուղերում: Ըստ աղբյուրների Ղայբալիշենի 700 բնակիչներից կենդանի են մնացել 11 տղամարդ և 87 կին ու երեխա[2]: Իսկ արյունռուշտ Սուլթանովն ու իր անգլիացի գործընկերները ականատես լինելով այս ողբերգությանը՝ ոչինչ չեն ձեռնարկել ոճրագործությունը վերջ տալու համար: Սուլթանովի կարծիքով արյան մեջ խեղդելով արցախահայությանը՝ կստիպեն նրան ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Մինչդեռ արցախցիների հերոսական դիմադրությունը, մինչև վերջ պայքարելու պատրաստակամությունը հոդս են ցնդեցնում ադրբեջանցի պատմաբանի մտքերն այն մասին, թե արցախահայերն ապստամբել են դաշնակցություն կուսակցության դրդմամբ և ապստամբության գաղափարը չի ծագել ժողովրդի մոտ: Մինչդեռ արցախահայությունը ոչ թե ապստամբել, այլ ազգային պայքար է մղել ընդդեմ իր անկախության դեմ ոտնձգություն բարձրացնողների: Արցախահայությունը չի ընդունել

[1]Աբրահամյան Հ., ՄարտնչողԱրցախը 1917-2000, գիրքԱ 1917-1923,Երևան, 2003, էջ 125:
[2]Նույն տեղում, էջ 142:

ադրբեջանական զավթիչներին միայն մի պատճառով, քանի որ Արցախը Ադրբեջանի մաս երբեք չի կազմել, Սուլթանովի իշխանությունը օտարամուտ է, Ադրբեջանին կցվելը հայի համար անընդունելի էր և խորթ: Կռվի դուրս եկած արցախցին գիտեր, որ կռվում է իր հողը պաշտպանելու համար, սա է իրականությունը: Այս դեպքերն համաժողովրդական բնույթ ունեին և Նիֆտալիևի կողմից դրանց նեղ կուսակցական, կամ դասակարգային բնորոշում տալը չի համապատասխանում պատմական ճշմարտությանը: Ադրբեջանցի պատմաբանը առանձնակի ոգևորությամբ է խոսում 1919թ. օգոստոսի 12-ին Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարում ձեռք բերված օգոստոսյան համաձայնագրի մասին՝ այն համարելով մինչև 1921թ. գոյություն ունեցող միակ փաստաթուղթը, որի վրա հիմնվելով պետք է կարգավորվեին հայ-ադրբեջանական հարաբերությունները վիճելի տարածքների վերաբերյալ: Իհարկե պատմաբանի կողմից խիստ ուռճացված գնահատական է տրված հիշյալ համաձայնագրին, ինչը և բնական է, քանի որ իր բովանդակությամբ այն ձեռնտու լինելով ադրբեջանական կողմին, որոշ կարևոր հանգամանքների անտեսմամբ և մերժմամբ, պատմաբանն այն համարում է լուրջ փաստաթուղթ, որտեղ իբր արցախահայությունը ճանաչում է Ադրբեջանի իշխանությունը: Այստեղ արդեն միանգամայն անտեսվում են այն պայմաններն ու օբյեկտիվ գործոններն, որոնց ազդեցությամբ հարկադրաբար ծնվեց այդ համաձայնագիրը: Համաձայնագիրը բաղկացած էր 26 կետից[1]: Համաձայնագրի 1-ին և 2-րդ կետերում նշված էր, որ Ղարաբաղի հայկական գավառները/ Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ և Շուշի քաղաքը/ մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը << ժամանակավորապես իրենց համարում են Ադրբեջանի հանրապետության սահմաններում>>: Նիֆտալիևի աշխատության մեջ խոսք անգամ չկա օգոստոսյան համաձայնագրի ժամանակավոր բնույթի մասին, այլ պարզապես նշված է, որ համագումարը որոշել է ճանաչել Ղարաբաղը Ադրբեջանի կազմում: Իսկ իրականում ադրբեջանցի պատմաբանները լռում են այն մասին, որ Ղարաբաղի հայության յոթերրորդ համագումարի վրա ճնշում գործադրելու նպատակով չբավարարվելով բազմիցս կրկնվող սպանդերով, Սուլթանովը նոր ուժեր է կենտրոնացնում Ղարաբաղի սահմանամերձ շրջաններում և ավերածություններ կատարում: Համագումարը հրավիրվում է Շոշ գյուղում: Սուլթանովի հրամանով հրանոթների փողերը ուղղվում են Շոշ գյուղի և քաղաքի հայկական թաղամասի վրա: Վերջինս վերջնագիր էր ներկայացրել համագումարին ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը: Համագումարն անընդհատ ձգձգում է բանակցությունները ժամանակ շահելու նպատակով, Սուլթանովը հրամայում է նոր ուժեր տեղափոխել Արցախ: Դրությունն առավել քան տագնապալի էր դառնում: Վերահաս ողբերգության և սպասվելիք արյունահեղության առաջն առնելու նպատակով համագումարի կողմից ընտրված 20 հոգուց կազմված հանձնաժողովը որոշում է մեկնել Շուշի և Սուլթանովի հետ բանակցություններ վարել: Անգլիացիների ճնշման ներքո, որոնք վստահեցնում էին, թե վիճելի տարածքների՝ Ղարաբաղ-Զանգեզուրի հարցի վերջնական լուծումը տեղի կունենա Փարիզի վեհաժողովի որոշմամբ, ինչպես նաև Ադրբեջանի ռազմական սպառնալիքների ներքո, հանձնաժողովը Ղարաբաղի հայության յոթերրորդ համագումարի անունից ստորագրում է վերոհիշյալ համաձայնագիրը:Համագումարի պատգամավորները ժամանակավոր համաձայնագիրը ընդունեցին ոչ թե իրենց ազատ կամքով ու համոզմունքով, այլ հարկադրանքով ու բռնությամբ: 1920թ. ապրիլի 28-ին տեղի ունեցած խորհրդայնացումից հետո Մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը փոխանցվեց խորհրդային Ադրբեջանին:

Նիֆտալիևը գրում է, հայտնի է, որ այս շրջանում Թուրքիան պայքար էր մղում Անտանտի դեմ, միաժամանակ Մուստաֆա Քեմալի կառավարության նպատակն էր պահպանել եղբայրական Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Նիֆտալիևը նշում է, թե Թուրքիան չէր կարող անտարբեր մնալ Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, քանի որ Ադրբեջանը և ադրբեջանական թուրքերն այն կամուրջն են, որ կոչված են միացնելու Թուրքիան թուրքերի հետ, որոնք գտնվում էին Խորհրդային Ռուսաստանի

[1]Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920թթ., Երևան, 2003, էջ 265:

տիրապետության ներքո: Ուստի և Մուստաֆա Քեմալը անհանգստություն է հայտնել այն մասին, թե խորհրդային Ռուսաստանը ցանկանում է Ադրբեջանի և Թուրքիայի միջև ստեղծել հայկական պետություն: Նիֆտալիևը նշում է, որ Քեմալական կառավարության դիրքորոշումը իր վառ արտահայտությունն է գտել Քեմալի հետևյալ արտահայտության մեջ. «Մենք ցանկանում ենք ստեղծել անկախ Ադրբեջանի հանրապետություն, որի համար անհրաժեշտ է կապերը ամրապնդել ռուսների հետ: Հարկավոր է այնպես անել, որ որոշ շրջաններ , ինչպիսին օրինակ Ղարաբաղն է, գտնվի Ադրբեջանի վերահսկողության տակ»:[1] Միանգամայն պարզ է, որ թուրք-ադրբեջանական կամուրջը պետք է հաստատվեր խորհրդային Ռուսաստանի միջոցով, այս շղթաների մեջ հայտված ՀՀ-ից պետք է ճանկեին նրա պատմական հայրենիքի անբաժանելի մասը կազմող տարածքները: Բաքվում ՀՀ լիազոր ներկայացուցիչ Մ. Հարությունյանը իրավացիորեն նշում է, թե մուսավաթական Ադրբեջանի և Իթթիհատական Թուրքիայի ձգտումը ստեղծել միասնական Թուրքական պետություն՝ Կ.Պոլսից մինչև Բաքու, փաստորեն չի վերացել: Խորհրդային Ադրբեջանի և հեղափոխական Կարմիր Անատոլիայի նպատակները նույնն են: Այն ինչ նախկինում իրականացվում էր թուրքական ցեղերի միասնական կարգախոսի տակ, այժմ իրականացվում էր բանվորագյուղացիական հեղափոխության և Անտանտի դեմ պայքարի կարգախոսի տակ: Իր նպատակին հասնելու համար Խորհրդային Ադրբեջանը ունի ուղի՝ստեղծել խորհրդային Հայաստանն երկրորդ Թուրքիայի հետ կապ ստեղծել Նախիջևանի և Սուրմալուի միջոցով: Եվ առաջին և երկրորդ դեպքերում էլ նրա տրամադրության տակ ենբոլշևիզմի ծրագրերն ու կարգախոսները, ինչպես նաև հայ կոմունիստների ուժերը[2]: Նիֆտալիևի աշխատությունը ողողված է փաստերի կեղծաբանմամբ, Ադրբեջանին որպես զոհ ներկայացնելու տրամադրվածությամբ, հայկականության հանդեպ խորը ատելությամբ, հայ ժողովրդի պատմական իրավունքների ոտնահարման ցավոտ արտահայտություններով, հայոց պատմության կեղծաբանմամբ: Խոսելով 1920թ. օգոստոսի 10-ի ռուս-հայկական համաձայնագրի մասին՝ Նիֆտալիևը նշում է, որ այն համընկավ Սևրի պայմանագրի հետ: Վերջինս գրում է, որ չնայած ընդամենը 3 ամիս էր մնացել, որ առաջին հանրապետությունն անկում ապրեր, այդուհանդերձ դաշնակցական կառավարությունը շարունակում էր հույսեր կապել Սևրի հետ և ապրել Մեծ Հայքի վերականգման խաբկանքներով: Փաստորեն հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքը և հայկական հողերը հետ վերադարձնելու, կրկին միավորելու և ոտնձգություններից պաշտպանելու կամքը ադրբեջանցի պատմաբանը համարում է խաբկանք, բնորոշում այն որպես ագրեսիվ և զավթողական,միաժամանակ քողարկելով թե Ադրբեջանի և թե եղբայրական Թուրքիայի արյունռուշտ պանթուրքիզմի քաղաքականությունը,որի արդյունքը եղավ հայոց ազգի մեծագույն ողբերգությունը՝ հայոց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում 1915թ.և դրա շարունակությունը կազմած 1918-1920թթ. կոտորածները Արևելյան Հայաստանում: Նիֆտալիեվը իր աշխատության մեջ հանդես գալով պանթուրքիզմի զավթողական քաղաքականության բացահայտ պաշտպանությամբ, նշում է, որ հայկական կողմը նվաճողական հավակնություններ ուներ նաև «թուրքական հողերի նկատմամբ» ներկայացնելով Արևմտյան Հայաստանը որպես Թուրքիայի արևմտյան հողեր և ավելացնում, որ այս տարածքներում հիշյալ շրջանում (նկատի ունի 1918-1920թթ-ը իր ուսումնասիրության շրջանակներում-մեջբերումը մերն է՝ Ա.Ա) բնակչության մեծամասնությունը կազմում էին թուրքերը: Հետաքրքիր է, իսկ ինչու չպետք է թուրքերը կազմեին մեծամասնություն մի տարածքում, որտեղ հայ ժողովուրդը ենթարկվել էր համամարդկային ծանր հանցագործության՝ ցեղասպանության, բռնագաղթի, հայրենազրկվել: Ոչ միայն ցեղասպանության, այլ թեկուզ մեղմ ասած հայկական ջարդերի մասին Նիֆտալիևը ոչինչ չի հիշատակում, այդ ոճրագործությունների մասին գրելը պատմաբանին ձեռնտու չէ, հենց այստեղ է, որ թքած ունենալով անաչառության, պատմական փաստերի ճշգրիտ ներկայացման և

[1] И. Нифталиев, նշվ. աշխ., էջ78:
[2] Нагорный Карабах в международным…, էջ 512:

բարոյական խղճի վրա, ադրբեջանցի պատմաբանը շարադրում է դեպքերի ընթացքն իրեն ձեռնտու բովանդակություն և երանգ հաղորդելով, համամարդկային ընթերցող հասարակությանը փորձելով ներկայացնել խեղաթյուրված, մարդկային և ազգային արժեքները ոտնահարող կեղծ պատմություն:

Այսպիսով ադրբեջանական պատմագիտությունը կոչված է ծառայելու թուրք-ադրբեջանական նվաճողական ագրեսիային, հայոց ազգի պատմության խեղաթյուրմանը, իրականությունն ու պատմական փաստերը արհեստավարժ փոփոխելուն ու քողարկելուն:

Գրականություն

1. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա 1917-1923,Երևան, 2003:
2. Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը/1920-1921թթ./, Երևան, 2010 :
3. Իշխանյան Ե., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1999:
4. ԿարապետյանՄ.,Հայաստանը 1912-1920թթ., Երևան, 2003:
5. Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը/1920-1921թթ./, Երևան, 2010:
6. Балаев А. Азербайджанское национальное движение 1917-1918гг. Баку 1998.
7. Балаев А. Мартовские события 1918 года в Азербайджане Баку 2009.
8. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии, Том 1, Москва, 2008.
9. Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы 20-ого века), Баку, 2010.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Առստամյան Արմինե - պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ պատմության ամբիոնի դասախոս
Էլեկտրոնային հասցե՝ armine.arustamyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ավանեսյանը :